

մշտնջենաւոր եւ հաւատարիմ ծառայ զինք կը դաւանի. եւ «կնոջը եւ կայսեր ամենախոնարհ ծառան ասպարիզին վրայ վեհ դիւցազուն կը դառնա», թագաւորութեանց կը տիրէ, եւ նուիրեալ արքայական պսակը կը մերժէ, եւ յաղթանակի հանդիսին կը տեսնուի հետեւակ իր գերի բռնած թագաւորներով՝ առջեւէն՝ երկրպագելով Թեոդորայի եւ Յուստինիանոսի գահուկից:

Վերջը քանի որ մեր պատմութեան ժամանակին կը մօտենանք, կը տեսնենք, որ կայսերական գահուկից վրայ բարձրացեալ մարդիկ աւելի կը պղտիկնան, եւ մեծ կարծուածները խառնուող մը ունին առաքինութեանց եւ մոլութեանց. ի բաց թողեալ Սօրիկ հռոմայեցի կամ Յայկազն (որու ծագումն նշանակութիւն պետք չէ ունենա հայու համար), որ աւելի ազնիւ սիրտ ցցուց մեռնելու վայրկենին քան թէ գահուկից վրայ. կը տեսնենք եւ Յերակլ՝ դիւցազն թագաւորութեան սկիզբը եւ վատթար վերջերը: Այն մարդը իր մեծամեծ յաղթութեամբ պարսից դէմ, այն տկարութեան հասցուց բերաւ այդ երկու թագաւորութիւնքը, որ արաբաց հարուածներուն չկրցան դիմանալ եւ ընկճեցան կամ տապալեցան:

Ինչ Յարկ խօսելու Յոյն կայսրութեան ժողովրդոց վրայ, որոնց մայրաքաղաքի ապականութիւնը սովորութեանց եւ բարուց, զեխութեանց եւ թշուառութեանց, վատութեանց եւ անզգամութեանց անցան զանցան Ռոմայ քաղաքացուոց վերջին օրերը, մանաւանդ որ սոքա աւելցուցին ամէն մոլութեանց վրայ կրօնամոլութիւն մը՝ ուր կայսրեն սկսեալ յետին ձկնորսը ինքզինք աստուածաբան կը կարծէր, կրկեսները կրօնական վիճաբանութեամբ կը սկսէին եւ արիւնահեղ կռիւներով կը վերջանային, եւ անիմանալի հաւատս խորհուրդները թեթեւամիտ եւ կիսուսումն մարդկանց խորհրդածութեանց նիւթ էին: Այդ մեծատարած կայսրութեան մայրաքաղաքին մէջ Սուրբ աստուած երգելու ինդիր մը աւելի կարեւորութիւն ունէր քան թէ բոլոր Ափրիկէի կորուստը. թշնամին՝ հոն, պարսից, աւար, պուկար, արաբ, աշխարհքի ծայրերէն կը հագնէր, հուր, սուր, կոտորած եւ աւերմունք կը բերէր շուրջանակի, Կոստանդնուպոլսոյ պարիսպները կը ծեծէր եւ ներսը քաղաքացին կրօնական վիճաբանութիւնքը նախամեծար կը համարէր, եւ երկրորդական առ դուրս հասեալ վտանգը: Եթէ յաղթուէր անհոգութեան եւ վատութեան չէր յանցանքը՝ այլ աստուածային բարկութեան պատուհասն էր. եթէ Յաղթէր, Աստուածամօր շնորհքն էր: Այս կրօնական զբաղմունք ամէն օր նոր հերետիկոսութիւնք կը ծնանէին եւ նոր վեճեր:

Նոյն ոգին՝ ուրիշ ձեւով կը վարէր Պարսից պետութիւնը. յաղթող արքայից արքան՝ արեւուն եւ կրակին կ'ուտար յաղթութեան փառքը. Յպատակ այլակրօն ժողովուրդք խիստ հալածանաց կ'ենթարկուէին ժամանակ-ժամանակ. եւ ի բաց